Եղիշե Չարենց

Ես մե անգին գոզալ տեսա...

Ես մե անգին գոզալ տեսա Գյուրջստանի քաղաքումը,
Վզին՝ վարդեր ու խալ տեսա Գյուրջստանի քաղաքումը:

Կանգնել էր լեն քուչի մեջը, հագին ատլաս ու խաս ուներ,
Գլխին ոսկի ու շալ տեսա Գյուրջստանի քաղաքումը:

Արեգակի շողքն էր ընկել վրեն ոսկե չիքիլի պես՝
Շրթերը խաս ու ա՛լ տեսա Գյուրջստանի քաղաքումը:

Անցա, կամաց աչքով արի, ուզի ասեմ՝ ջա՛ն ես, էլի՛,
Դեմս կեցած մե սա՛ր տեսա Գյուրջստանի քաղաքումը:

Հիմի տխուր երգ եմ ասում, էշխս կրակ ըլի ասես՝
Անմահական մե յա՛ր տեսա Գյուրջստանի քաղաքումը: